ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2025 թվականի N 407-Ա

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի 02.12.2025թ. թիվ 15 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Հաստատել 2025թ. դեկտեմբերի 2-ին Թումանյանի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 15 արձանագրությունը /կցվում է/ :

2. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի աճուրդը համարել չկայացած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 408-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արմեն Արշակի Խալաթյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Աթան գյուղի 06-011-0007-0002 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Աթան, 2-րդ փողոց, 1-ին փակուղի, 2/1 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 409-Ա

06-035-0010-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Թումանյան համայնքի ավագանու 2024թ.նոյեմբերի 22-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 101-Ն որոշումը,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հաշվի առնելով <<ՏՍՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը և հիմք ընդունելով Շանթ Արմենակի Գոչեանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնք, Դսեղ գյուղում գտնվող, 06-035-0010-0005 կադաստրային ծածկագրի գույքի բաժանման արդյունքում առաջացող նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝
1) 0.1588 հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Թումանյան համայնք, գ. Դսեղ, 13-րդ փողոց 8 հողամաս,

2) 0.1588 հա մակերեսով նոր առաջացող գույքային միավորին՝ Թումանյան համայնք, գ. Դսեղ, 13-րդ փողոց 8/1 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 410-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «VAZ -21214» ՄԱԿՆԻՇԻ ԹԵԹԵՎ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 77-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը աճուրդով վաճառելու մասին» թիվ 12 արձանագրությունը, ըստ որի 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող «VAZ-21214» մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենան (պետհամարանիշ՝ 704 LL70) սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Արտյոմ Մերուժանի Կիակոսյանը՝

Որոշում եմ.

1. «VAZ-21214» մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենան (պետհամարանիշ՝ 704 LL 70) օտարել Արտյոմ Մերուժանի Կիրակոսյանին՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 546000 (հինգ հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265123167 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել շարժական գույքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ շարժական գույքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 411-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Լոռի-3 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով,հիմք ընդունելով Արթուր Աթյանի /մուտք 18.11.2025թ. թիվ 767/ դիմումը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի 06-035-0048-0024 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,0032 հա մակերեսով հողամասի գործառնական փոփոխել այն փոխադրելով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և համապատասխանեցնել Լոռի-3 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 20.11.2025թ. 394-Ա որոշումը:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2025 թվականի N 412-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «UAZ-2206» ՄԱԿՆԻՇԻ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍ,ՎԱԳՈՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 77-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2025 թվականի դեկտեմբերի 2-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը աճուրդով վաճառելու մասին» թիվ 13 արձանագրությունը, ըստ որի 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող «UAZ-2206» մակնիշի միկրոավտոբուս,վագոն ավտոմեքենան (պետհամարանիշ՝ 600 LU 39) սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Միեր Աղմաղանի Ղազարյանը՝ Որոշում եմ.

1. ««UAZ-2206» մակնիշի միկրոավտոբուս,վագոն ավտոմեքենան (պետհամարանիշ՝ 600 LU 39) օտարել Միեր Աղմաղանի Ղազարյանին ՝ այսուհետև Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 443000 (չորս հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265123167 հաշվեհամարին:
3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել շարժական գույքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ շարժական գույքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2025 թվականի N 413-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Գայանե Գագիկի Հովհաննիսյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի 06-035-0019-0022 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, 3 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2025 թվականի N 414-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իավունքի վկայագիրը տրված 11.06.2025թ. գրանցված է սեղանամատյանում թիվ 3295,ժառանգական գործ N193/2025, <<Գասպար Վեքիլյան>> ԱՁ-ի կողմից տրված շինության և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով քաղաքացի Դավիթ Սամվելի Աղաբեկյանի կողմից լիազորված անձ Արմեն Հրաչիկի Հարությունյանի /մուտք՝ 24.11.2025թ. թիվ 779/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Դավիթ Սամվելի Աղաբեկյանի /ծնված՝ 10.05.1979թ/,սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 35-րդ փողոց, թիվ 2/2 հասցեում գտնվող 06-035-0014-0007 ծածկագրում գտնվող 180.63 քմ մակերեսով երկհարկանի բնակելի տան,36.04 քմ մակերեսով բաց պատշգամբի, 0.9 քմ մակերեսով աստիճանահարթակի,28.47 քմ մակերեսով ավտոտնակի,31.36 քմ մակերեսով անասնաշենքի,5.12 քմ մակերեսով մառանի,9.19 քմ մակերեսով պարիսպի և 0,19425 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:
2.Օրինականացնել Թումանյան համայնքի Դսեղ գյուղում 35-րդ փողոց, թիվ 2/2 հասցեում, Դավիթ Սամվելի Աղաբեկյանին պատկանող, 06-035-0014-0007 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,19425 հա մակերեսով հողամասում, 1983 թվականին ինքնակամ կառուցված, 180.63 քմ մակերեսով երկհարկանի բնակելի տունը,36.04 քմ մակերեսով բաց պատշգամբը, 0.9 քմ մակերեսով աստիճանահարթակը, 28.47 քմ մակերեսով ավտոտնակը,31.36 քմ մակերեսով անասնաշենքը,5.12 քմ մակերեսով մառանը և 9.19 քմ մակերեսով պարիսպը:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ք. Թումանյան